



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

« 30 » 09 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0143-22

Ձեռնարկողը՝

«ԼԱՔՇՐԻ ԱՊԱՐՏԱՄԵՆՏ» ՍՊԸ

Երևան, Դավիթ Անհաղթ փ., 14/12

Գործունեությունը՝

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Կ. Ուլնեցու փողոց 56/14 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքերի վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝



Խաչիկ Մարտիրոսյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ **0143-22**
<30> 09 2022թ.

Երևանի, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Կ. Ուլնեցու փողոց 56/14 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքերի վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝
Փաստաթղթի տեսակը՝

Գործունեությունը՝
Տեղադրման վայրը՝

«ԼԱՔՇՐԻ ԱՊԱՐՏԱՄԵՆՏ» ՍՊԸ
Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ
«Գ» կատեգորիա
ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ մասի, 7)-րդ կետի ա. ենթակետի՝ բազմաբնակարան բնակելի շենքերի վերակառուցումը որպես քաղաքաշինության բնագավառի գործունեություն դասակարգվում է որպես «Գ» կատեգորիայի գործունեություն:

Ներածական մաս. Գործունեության նպատակն է Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան Կ. Ուլնեցի փողոց հ. 56/14 հասցեում գտնվող հողամասում վերակառուցել գոյություն ունեցող շենքերը՝ կառուցելով բազմաբնակարան բնակելի շենքեր: Բնակելի շենքերի նախագծային աշխատանքների համար հիմք է հանդիսացել Երևանի քաղաքապետարանի կողմից 2021 թվականի մարտի 17-ին տրված N01/18-07/2-14283-154 նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանք): Հողամասը սեփականության իրավունքով (վկայական N 25082020-01-0226) պատկանում է կառուցապատող՝ «ԼԱՔՇՐԻ ԱՊԱՐՏԱՄԵՆՏ» ՍՊԸ-ին /այսուհետ՝ Ընկերություն/, զբաղեցնում է ընդհանուր՝ 0.3 հա մակերես: Կառուցապատվող հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, իսկ գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման: Հողամասին կից Ուլնեցի-Ռուբինյանց ավտոմայրուղին է և բնակելի կառուցապատված տարածքներ: Հողամասին մոտեցումներն ապահովված են Ուլնեցի-Ռուբինյանց ավտոմայրուղուց:

Նկարագրական մաս. Գեոմորֆոլոգիական տեսանկյունից դիտարկվող տարածքը տեղադրված է Քանաքեռ-Արաբկիրի լավային սարահարթի վրա: Հողամասի ռելիեֆն ունի 9 մետր տարբերություն՝ Ուլնեցի-Ռուբինյանց փողոցից մինչև զուգահեռ սպասարկող փողոցը: Գործունեության համար նախատեսված տարածքն իրենից ներկայացնում է նախկին քաղաքաշինական փաստաթղթերի հիման վրա կազմակերպված շինարարական հրապարակ, որտեղ առկա են կիսակառույց շինություններ /մասամբ իրականացվել են «Ա» մասնաշենքի կառուցապատման աշխատանքները, ավարտվել են «Բ» մասնաշենքի հողային աշխատանքները/: Նախկին նախագծի իրականացումը, համաձայն որի՝ նախատեսված է եղել հողամասի Ռուբինյանց-Ուլնեցի մայրուղուն հարող մասում 7 հարկանի շինություն, իսկ հողամասի հարավային մասում՝ 4 առանձնատուն /2 խորժեք և մեկ մասնակի հարկով/ դարձել է ոչ նպատակահարմար և Երևանի քաղաքապետարանի կողմից Բազմաբնակարան բնակելի շենքերի վերակառուցման համար տրամադրված:



Ջեռուցումը և օդափոխությունը ողջ համալիրում կատարվելու է անհատական լուծմամբ օդորակիչների և էլեկտրական ջրաջեռուցիչ կաթսաների միջոցով: Բնակարանների սան հանգույցներից և խոհանոցներից օդի արտածումը բնական է: Բոլոր սան հանգույցների հորանների վրա վերևում նախատեսվում են դեֆլեկտորներ: Ավտոկայանատեղիից նախատեսված է օդափոխության արհեստական համակարգ: Արտածումը կատարվում է արտածման համակարգերի միջոցով: Օդահեռացումը կատարվում է երկու՝ վերևի և ներքևի զոնաներից: Նախատեսված է CO գազի բաղադրությունը չափող ցուցիչ, որի ազդանշանի դեպքում կաշխատի արտածման օդամուղը: Ներածման համակարգերի միջոցով կապահովվի մաքուր օդի մուտք ավտոկայանատեղերին:

Բազմաբնակելի շենքերի կառուցապատման ընդհանուր տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

- Հողամասի մակերես՝ 3000 քմ, որից
- Կառուցապատման մակերես՝ 1798 քմ;
- Կանաչապատման մակերես՝ 1202 քմ;
- Բնակարանների քանակ՝ 67
- Ստորգետնյա կայանատեղիների քանակ՝ 120 հատ:

Բազմաբնակարան բնակելի շենքերի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու են համաձայն <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանների: Ջրամատակարարման ցանցը միանալու է գոյություն ունեցող Ուլնեցի - Ռուբինյանց փողոցով անցնող D=220մմ տրամագծով պոլիէթիլեն ջրագծին: Ջրահեռացումն իրականացվելու է նույն փողոցով անցնող՝ D = 300մմ տրամագծի կոյուղատարին միանալով: Հեղեղատարը կմիանա Ուլնեցի - Ռուբինյանց փողոցով անցնող D=500մմ տրամագծով հեղեղատարին:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը համաձայն տեխնիկական պայմանի՝ 30 կվտ ծախսով կիրականացվի ՏԵ 306-ի 0,4 կ/վ ց/լ վահանից:

Կառուցապատման աշխատանքների տևողությունը հաշվարկվել է 24 ամիս: Շինարարության փուլի համար անհրաժեշտ ջրի քանակը պայմանագրային հիմունքներով շինհրապարակ կբերվի ավտոցիստեռներով՝ Երևան քաղաքի տեխնիկական ջրի ցանցից: Ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է 2173 խմ/շին.ժամանակահատված, որից շինհրապարակի ջրցանի, շինաշխատանքների կազմակերպման ջրածախսը կկազմի 855 խմ/շին.ժամ/: Աշխատողների խմելու և կենցաղային կարիքները կապահովվեն բերովի ջրով տարաներով, իսկ աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովվեն շինհրապարակում տեղադրվող բիոզուգարաններով:

Շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և վերանորոգումը նախատեսված է իրականացնել մասնագիտացված կետերում: Բետոնի և շաղախի առաքումն իրականացվելու է մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ պատրաստի վիճակում, մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական տեխնիկայի շահագործմամբ, բետոնային աշխատանքներով և կոնկրետ շինարարության ընթացքում անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով, որոնք կարող են առաջանալ տեխնիկական միջոցների



աշխատանքից դիզվառելիքի այրման արդյունքում: Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունները կանխարգելելու նպատակով հայտում ներկայացվել է բնապահպանական միջոցառումների ծրագիր:

Մթնոլորտային օդի պահպանության նպատակով նախատեսված է՝

- շինարարության ընթացքում պարբերաբար ջրցանի իրականացում /օրական 2-3 անգամ/,

- շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի ստուգում՝ իրականացնելով կարգավորում,

- շինարարական նյութերի (ավազ, խիճ, հողային զանգված և այլն) տեղափոխում փակ ծածկով մեքենաներով,

- շինհրապարակում սորուն նյութերի պահեստների ծածկում համապատասխան բարձրությամբ թաղանթով՝ փոշու տարածումը կանխարգելելու նպատակով,

- շինարարական աշխատանքների ժամանակ շինությունների ծածկում՝ փոշու տարածումը կանխող ցանցով:

Շինարարության ընթացքում հոսքաջրերի և անձրևաջրերի հեռացման համար, շինհրապարակին կից նախատեսված է պարզարան /25խմ ծավալով պլաստիկ տարողություն/, որտեղ հոսքաջրերը կենթարկվեն մեխանիկական նստեցման, որից հետո պարզեցված ջուրը կրկին կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ առաջացած նստվածքը կհեռացվի որպես շինադբ: Շինհրապարակում նախատեսված է անվադողեի վացման կետ, որտեղ կվացվեն անվադողերը և դուրս կգան շինհրապարակից:

Շինարարության ընթացում հարակից տարածքների համար աղմուկի հնարավոր ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված միջոցառումները ներառում են՝ շինարարական աշխատանքների և տրանսպորտային երթևեկության կազմակերպում սահմանված ժամերին, աղմուկ առաջացնող մեքենաների և սարքավորումների օգտագործումից խուսափում, խլացուցիչների տեղադրում, տեխնիկական միջոցների պարբերաբար ստուգում և կարգաբերման իրականացում:

Հայտում ներկայացվել են նաև տարբեր տեսակի թափոնների կառավարմանն ուղղված միջոցառումներ: Հողային ռեսուրսների և շրջակա տարածքների պահպանության նպատակով շինհրապարակում քայքայողների և հեղուկ վառելիքի տարաները կպահվեն հատուկ հիմքերի վրա (ավազե, մետաղական կամ բետոնե), բացառելու նպատակով հնարավոր արտահոսքերը շրջակա տարածքներ, իսկ նավթանյութերի արտահոսքը հնարավոր կլինի կանխել՝ ապահովելով շինարարական աշխատանքներում սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:

Շինարարության ընթացքում առաջացող՝ 300 խմ ծավալով շինարարական աղբը ժամանակավոր կկուտակվի շինհրապարակում, այնուհետև ամբողջությամբ կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայրեր:

Շինարարության ընթացքում աշխատողների անվտանգության ապահովման համար, հնարավոր արտակարգ իրավիճակներից խուսափելու և ռիսկերը նվազագույնին հասցնելու նպատակով նախատեսվել են միջոցառումների համալիր /որում ներառվել են նաև հակահրդեհային միջոցառումներ/:

Շինարարության փուլի համար նախատեսված բոլոր բնապահպանական միջոցառումները, ներառյալ՝ աշխատանքի և առողջության անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումները ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում /ԲԿՊ/: Կառուցապատողի կողմից ըստ ժամանակացույցի իրականացվելու է կանոնավոր մոնիտորինգ՝ բնապահպանական միջոցառումներ



ծրագրում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը վերահսկելու նպատակով: Բնապահպանական միջոցառումների իրականացման համար նախատեսված ծախսերը ամբողջ շինարարության փուլի համար հաշվարկվել է 1625000 ՀՀ դրամ, որի մեջ մտնում են՝ շինարարության փուլում շինհրապարակի ջրցանումը, ինչպես նաև մթնոլորտային արտանետումների, աղմուկի, թրթռումների, հողային ծածկույթի չափումները, որոնք նախատեսված են ամիսը մեկ հաճախականությամբ:

Կանաչապատումն իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը համաձայնեցվել և հաստատվել է Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության հետ: Զրոյական նիշում կանաչապատման համար նախատեսված՝ 1202 քմ մակերեսում իրականացվելու է գեոցանց, որը ներառում է հետևյալ տեխնոլոգիան: Հարթեցվելով հողագրունտը, վրան փռվում է խճային շերտը, այնուհետև ծածկվում է բուսահողով, որի վրա տեղադրվում է մետաղյա, կամ բետոնից պատրաստված ցանց, որի բջիջներում իրականացվում է ճմապատում, կամ ստեղծվում է տեսիլամարգ: Յանցը պաշտպանելով կանաչ ծածկույթը, մեքենաները կարող են տեղաշարժվել, կամ կայանել այդ տարածքներում՝ առանց վնասելու: Կառուցապատվող տարածքում կանաչապատման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ կլինի 150 խմ բուսահողի լիցք, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցվելով Երևանի քաղաքապետարանի հետ: Կանաչապատման համար նախատեսվում է տնկել հետևյալ ծառատեսակները, այդ թվում՝ 5 հատ Գիիի կազակական, 7 հատ Ոսկեգույն թույա, 4 հատ Ասպիրակ, 5 հատ Ֆորգիցիա, 2 հատ Բարբարիս, 14 հատ Գնդաձև սամշիտ, 460 հատ /կամ 95 գծմ/ Կիպրոս, 650 հատ /կամ 995քմ/ Թզուկ վարդեր, և ճմապատում՝ 1202 քմ: Կանաչապատ գոտիներում կիրականացվի նաև բազմամյա խոտաբույսերի ցանք: Կանաչապատ տարածքների ոռոգումը նախատեսված է իրականացնել հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից:

Պարճառաքանական մաս. Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքում անցկացվել են հանրային քննարկումներ: Փորձաքննության գործընթացում Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում 2022 թվականի սեպտեմբերի 15-ին իրականացված երկրորդ հանրային քննարկման ընթացքում նախատեսվող գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Փորձաքննական գործընթացում Հայտի վերաբերյալ ստացվել են կարծիքներ, դիտողություններ և առաջարկություններ՝ առողջապահության, արտակարգ իրավիճակների, նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից և շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից, որոնք ևս հաշվի են առնվել Հայտի լրամշակումներում:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր բնույթ և կլինեն տեղայնացված՝ ընդգրկելով հիմնականում նախատեսվող գործունեության տեղամասը և շինարարության ժամանակահատվածը: Դրանք շինարարության ընթացքում կարող են բացառվել կամ մեղմացվել Հայտի բնապահպանական միջոցառումներ ծրագրում նախանշված մեղմացնող



